



### ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

17 Մայիսի լիբանանեան օրաթերթերու գլխաւոր նիւթն է Մեթնի մասնակի ընտրութիւնները, յատկապէս՝ Միշէլ Մըրի դատեր՝ Միքնա Մըրի թեկնածուութիւնը: Այս գծով զօրութեանը կը կրեն գանձազան խորագիրներ: «Մաֆիոյ» կը գրէ: «Միքնա Մըր կը յայտարարէ իր թեկնածուութիւնը, որպէսզի սրբագրէ Մեթնի մէջ պատահած մեծ սխալները: Միշէլ Մըր կ'ըսէ, թէ թեկնածուութիւնը ենթակայ չէ բանակցութեան կամ ետդարձի: Մըր «իր տան» Դաշնակցութեան մօտ գորակցութիւն Միքնային կուսակցութեան բոլոր քաղաքներով: «Մուսքարպալ» կը գրէ: «Մեթնի ընտրութիւնները տեսարանը կ'ուղղուի դէպի «սուկոր կոտորելու» պայքարի: Միքնա Մըր կը յայտարարէ իր թեկնածուութիւնը իր հօր եւ Դաշնակցութեան գորակցութեան մը:

«Լիուա» օրաթերթի խորագիրը «Համախոհական թեկնածու մը գտնելու համար եղած ջանքերէն ետք, Միքնա Մըր կը յայտարարէ իր թեկնածուութիւնը Մեթնի աթոռին: անոր հայրը կը հաստատէ, թէ հարցը ենթակայ չէ բանակցութեան»: Յօդուածին մէջ կը նշուի թեկնածուին այցելութիւնը «Սարգարապատ» սկիւտր եւ Հ. Յ. Դաշնակցութեան կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչին կատարած գորակցական յայտարարութիւնը: «Քիֆան Արապի» իր խորագիրը դրած է հետեւեալ ձևով: «Մըր հաստատեց իր դատեր անբանակցելի թեկնածուութիւնը: Միքնա ուզեցին հաշուեկարգի անձնական պայքար մը եւ Մեթնի ընտրութիւնները ընդդիմադիրներուն եւ իշխանաւորներուն միջեւ չէ»: Յօդուածին մէջ յիշուած է Միքնա Մըրի եւ իր հօր «Սարգարապատ» այցելութիւնը, եւ Հ. Յ. Դ. Լիբանանի Կ. Կ. Կ. ներկայացուցիչին յայտարարութիւնը, ըստ որուն՝ ան պատրաստակամութիւն կը յայտնէ 2 Յունիսին կուսակցութեան բոլոր քաղաքներով եւ հարկիրներով նեցուկ կանգնելու Միքնա Մըրին:

«Անուար» օրաթերթը կը գրէ, թէ Միքնա Մըր իր թեկնածուութեան յայտարարութեանէն ետք անմիջապէս ուղղուած է Հ. Յ. Դաշնակցութեան կեդրոնատեղի, ուր կայացած հանդիպումէն ետք կուսակցութիւնը իր գորակցութիւնը յայտնած է անոր: «Տիար» օրաթերթը կը գրէ: «Դաշնակցութիւնը գորակցեցաւ Միքնա Մըրի թեկնածուութեան»: Թերթը տուած է թեկնածուին այցելութեան եւ Դաշնակցութեան գորակցութեան լուրը: Իսկ «Նահար» կը գրէ: «Միքնա Մըր յայտարարեց իր «արտաքարգ հանդուանի համար» առած քայլը եւ Դաշնակցութիւնը գորակցեցաւ իրեն»:

Ասկէ բացի, թերթերը նաեւ լուսարձակի տակ կ'առնեն ընտրութիւններուն առնչուող սուր ընտրապայքարը կողմերուն միջեւ:

Առաջին էջի լուրերուն կարգին են Միշէլ Արեւելքի շուրջ խաղաղութեան վեհաժողովի հաւանական կայացումը Յունիսի սկիզբը, պաղեստինեան խորհրդարանի որոշումը, 2003ի սկիզբը ընելու նախագահական եւ երեսփոխանական ընտրութիւնները, առաջին անգամ ըլլալով Սպիտակ Տան խոստովանութիւնը, որ Պուշ Սեպտեմբեր 11էն առաջ գգովացուած ստացած էր օրհանաւերու հաւանական առեւանգումին մասին, ինչպէս նաեւ Քոնկրէսի քննադատութիւնը Պուշին: Այլ լուրով մը, «Նահար» կը նշէ, թէ Պուշի կառավարութիւնը կ'ուզէ վերադառնալ հին ձեւին եւ զպրոցներուն մէջ տղաքը եւ աղջիկները անջատել իրարմէ: Նոյն օրաթերթը իր առաջին էջով կը յայտնէ, թէ երկու բարսիւնները տեղեկացուցած են, թէ Յովհաննէս Պօղոս Բ. պապը կրնայ հրաժարիլ, եթէ անոր առողջապահական վիճակը վատթարանայ: Թերթերը նաեւ կը հարցնեն, թէ Յօդուածին խորհրդարանի անգամ թուական Ֆայսալ 18 ամսուան քանտարկութիւնը ստացած է, պետութիւնը վարկաբեկելու յանցանքով ամբաստանուելէ ետք:

«Պայքար» օրաթերթի առաջին էջի լուրերը կը վերաբերին պաղեստինեան հարցին. անոնց խորագիրներն են: «Պաղեստինցի մը Ռամալայի մէջ կը նահատակուի, մինչ իսրայէլեան բանակը Նապլուս կը ներխուժէ: Արաֆատ կը կ'ուղղէ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին՝ իսրայէլեան բռնարարքները դադարեցնելու անմիջական որոշում կայացնելու» եւ «պաղեստինեան «Համաս» շարժումը Ահուտական Արաբիոյ կը խոստանայ վերջ տալ իսրայէլի մէջ իր դործողութիւններուն»:

Միջազգային առումով թերթերը կ'անդրադառնան ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի, Կիպրոսի նախագահ Կյաֆթոս Քիբրիտէսի եւ Կիպրոսի թուրք ղեկավար Ռաուֆ Տեքթէալի ուղղած խաղաղարար կոչին, որուն մէջ ան կ'ըսէ, թէ պէտք է յաւելնել ճիշտ թափել Կիպրոսի բաժանման առնչութեամբ յարմար լուծում մը գտնելու եւ համաձայնութեան մը յանգելու համար:

Միւս կողմէ, «Մուսքարպալ» օրաթերթը կը գրէ, թէ Սուրիոյ փոխ նախագահ Ապտէլ Հալիմ Խատտամ ըսած է, թէ Դամասկոս նոր էջ բացած է Թուրքիոյ հետ իր յարաբերութիւններուն մէջ եւ թէ ինք հետաժողով է այդ կապերը զարգացնելու եւ ամրապնդելու բոլոր բնագաւառներուն մէջ:

### ԱՆԿՐԱԺԵՑ Է ԿԱՏԱՐԵԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Կ'ԸՍԵ ՌԵԱԼԻՏ ԺՈՍՊԼԱԹ

Ընկերվար Յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Երեսփոխան Արապի ժողովարար երէկ ընդգծեց, որ հանրապետութեան նախագահ զօր-է-միջ Լահուտի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի միջեւ գոյակցութիւնը անհրաժեշտ է եւ պէտք է շարունակուի մինչեւ նախագահի լիազօրութիւններու ժամանակաշրջանի ավարտը, եւ պէտք է կանխարգելիլ անոնց միջեւ յարաբերութիւններու սրուածին պատճառով որեւէ ցնցում, որովհետեւ կեդրոնական Դրամատունը եւ լիազօրութեան քաղաքացիները սուղ գին կը վճարեն անոր, իսկ եթէ ազգային դրամանիշի վարկին եւ արժէքին վնաս հասնի, ապա այդ վնասին անդրադարձները պիտի կրեն բոլոր կողմերը անխտիր:

Ժողովարար նաեւ ըսաւ, որ իր պլոքի անդամներէն ոմանց կառավարական կազմէն ներս ներկայութիւնը անյարմար կացութիւն կը ստեղծէ եւ նեղ կացութեան կը մատնէ գինը, եւ այս պահուն անհրաժեշտ է կատարել կառավարութեան փոփոխութիւն, որպէսզի ազգային միասնութիւնը նշանաբար մարմնաւորող տարազի մը հիմամբ նոր կառավարութիւն կազմուի:

Երկրաչափ Ռամադի Իրանիի անհետացումը պայտասական մարզէն ներս վտանգաւոր զայն հեռաձայնի հարցը քննարկելու նիստ չէ ճշգրտել, որովհետեւ վարչապետարանի ընդհանուր քարտուղար Զաքի Եուսէֆ:

վերջ դէպք ընտրական «պոլիտոգր» ներու բռնատիրութեան եւ սեղմ կամ միջակ ընտրաշրջան» ներու դրութեան, որպէսզի ժողովուրդին կամքի հարգատար արտայայտութիւնը ըլլան ընտրութիւնները:

### ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԺՈՂՈՎԻ ՀՐԱԻՐԵՑ ԱՊԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՈՒՄԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի ապապետականացումի գերագոյն խորհուրդի նախագահի հանգամանքով երէկ խորհուրդի անդամները հրաւիրեց Երկուշաբթի երեկոյան ժամը 6:00ին գումարելու ժողով մը, քննարկելու համար ընդհանուր հեռաձայնի ընկերութիւններուն մասին «ԵՅ. Էս. Պի. Սի.» դրամատան պատրաստած տեղեկագիրը:

Խորհուրդին մաս կը կազմեն ելեմուտքի նախարար Ֆուատ Մինիորա, աշխատանքի նախարար Ալի Քանսո, տնտեսութեան եւ առեւտուրի նախարար Պասլ Տիէյհան, արդարութեան նախարար Սամիր Ժարը եւ հարողակցութեան միջոցներու նախարար Ժան - Լուի Քըրտահի, ինչպէս նաեւ խորհուրդի ընդհանուր քարտուղար Զաքի Եուսէֆ:

### ՆԱԽԱՐԱՐ ՄԻՆԻՈՐԱ ԳՈՆ՝ ՏՈՒՐՔԻՆԻ ԱՊԱՂՎԱՏ ԵԿԱՄՈՒՏԷՆ

Ելեմուտքի նախարար Ֆուատ Մինիորա երէկ յայտնեց, որ նախարարաց խորհուրդը բլիթային հեռաձայնի հարցը քննարկելու նիստ չէ ճշգրտել, որովհետեւ վարչապետարանի ընդհանուր քարտուղարը չէ փոխանցած այս առնչութեամբ «ԵՅ. Էս. Պի. Սի.» դրամատան պատրաստած տեղեկագիրը:

Մինիորա երէկ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն մէջ յայտարարեց, որ Փետրուար եւ Մարտ ամիսներուն ընթացքին յաւելնալ արժէքի տուրքը պետական գանձակազմին ապահոված է 168 միլիարդ 488 միլիոն Լ. ոսկի, մինչ կը նախատեսուի, որ հասոյթը այդքան մեծ չըլլար, այլ՝ ամիսը 72 միլիարդ: Մինիորա ըսաւ, որ այս տուրքին ծիրէն ներս ամէնէն հասութեանը հանքային նիւթերը, ի մասնաւորի վառելիքի նիւթերը մաքսատուրքին միջոցով գանձուած մօտ 125 միլիարդ Լ. ոսկին է:

Պետական հասոյթներու այս աճը անհրաժեշտ է բարելաւելու համար պետութեան դրամական վիճակը եւ հաւաստեց, որ տնտեսական պայմաններու բարելաւումի նշաններ կան:

ԻձեւԱՆԱԻՐՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ԿԱՄԵՐԱԾՆՈՒԹԻՒՆԸ ԿԵՆՍԱԿԱՆ Է

Կ'ԸՍԵ ԸԵՅՆ ՖԱՍԼԱԼԼԱ

Ելի Մոհամէտ Հիւսէյն Ֆատալայա երէկուս իր քարուպիւն մէջ ըսաւ, որ բարձրաստիճան իշխանաւորներուն գոյակցութիւնը կենսական է, որովհետեւ անոնց պարբերական տարակարծութիւնները երկիրը այնպէս կը ցնցեն, որ կը կորսուի պետութեան եւ տնտեսութեան նկատմամբ ժողովուրդին վստահութիւնը:

Ելի Ֆատալայա ըսաւ, որ արդէն տարածայնութիւններ կան, թէ մարդիկ դրամատուններէն դուրս կը բերեն իրենց գումարները, որովհետեւ տնտեսական անկում կը նախատեսուի: Յոյս ունինք, որ այս նախատեսութիւնները չեն իրականանար եւ պետական պաշտօնատարներու հաւաստիքները ճիշդ դուրս կու գան, ըսաւ ան:

ԼԷՅԼԱ ՄԱՔՍՈՒՏԵԱՆԻ (ԾՆԵԱՂ՝ ՍԱՈՍԱ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 16 Մայիս 2002ին: Յուշարկաւորութեան արարողութիւնը կատարեցաւ Ուրբաթ, 17 Մայիս, կէսօրուան ժամը 12:00ին, Զաւթայի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, ուր կ'ընդունուին մարմինը փոխադրուեցաւ իր ծննդավայրը, «Հարուն» գիւղը, ուր կատարուեցաւ թաղումը:

Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ: Յուշակցութիւնները կ'ընդունուին Զաւթայի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ սրահը, Ծաբաթ 18 եւ Կիրակի 19 Մայիսին, կէսօրէ ետք ժամը 3:00էն 9:00ը:

### ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Պերճ եւ Քարոյ Հէքիմեան եւ զաւակուէք Օրդ. Անի Հէքիմեան  
Տէր եւ տիկին Նշան եւ Արաքս Հէքիմեան  
Տէր եւ տիկին Ալէք եւ Նուշիկ Ենիգոմշուեան  
Տէր եւ տիկին Հրայր եւ Միրէյ Հէքիմեան եւ զաւակուէք Օրդ. Անահիտ Թովմասեան եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝

ՀՐԱՉ ԷԷՔԻՄԵԱՆԻ (ԾՆԵԱՂ՝ 1919ԻՃ)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 14 Մայիս 2002ին, իր բնակարանին մէջ Լոնտոն, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուշարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Լոնտոնի Հայոց եկեղեցւոյ մէջ:  
● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:  
● Յուշակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին եղբոր՝ Նշան Հէքիմեանի բնակարանը, Զարիֆ, «Ռաշիտ Նախիբ» փողոց, «Քապուլիսի» շէնք 7րդ յարկ:

### ԱԿՆԱՐԿ ՄԵՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ (ԹՈՒՐՔԻՆՅԱՐԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ Ճէմ իսլամայի մարաքաղաք Ռէյքիաիքի մէջ կայացած Հայաստան-Թուրքիա-Ալբանիական եռակողմանի հանդիպումին արտաքին անգամ մը եւս իբրեւ նախապայման՝ հայերէն լեզուով զրահարակաւ յարաբերութեան, ներկայացուցած է ցնորական պայմաններ (կարգաւ պարտաւան մեր Ա. էջով), որոնց ամէնէն ուշագրաւը, սակայն, հետեւեալն է. «Հայաստան իր սահմանադրութեան պէտք է շնջէ հողային պահանջի յօդուածը»:

Թուրք ղեկավարներուն նմանօրինակ էլոյթներուն յաճախ հանդիպած ենք անշուշտ եւ վստահաբար տակաւին շատ պիտի յետք աղբիսի ձարը տուրքներ, որոնց պատասխանելը սակայն ոչ միայն մեր իրաւունքն է, այլեւ պարտականութիւնը:

«Հետաքրքրական» է, անշուշտ, որ Թուրքիա նախապայմաններ կը դնէ Հայաստանի ան յարաբերութեանց համար: Ո՞վ որոն պայման կը դնէ եղեր: Փոխանակ Հայաստանը, հայրենիքը պայմաններ դնելու, Անգարա կը փոթալայ մէկը կանխելու եւ ինքն իրեն փողկապ կը կապէ... Պահանջատէրը մե՞ք ենք, թէ ինք: Այս որքա՞ն անպատկառութիւն, լրբութիւն:

Բայց ո՞չ: Թուրքիոյ փոքրին ցաւը սուր է. ան այս ձեւով անողղակիօրէն ինքզինք կը մատնէ, երբ հողային պահանջի կ'ակնարկէ: Գող՝ սիրտը դող... Եւ սակայն այս պահուն, երբ նոյն այս ժողովին նախորեակին, Հայաստանի արտաքին գործոց նախարար կը յայտարարէր, թէ Հայաստան ստացած կը բարարուի միայն Հայկական Յեղասպանութեան Թուրքիոյ կողմէ ձանձաղումը սպասելով...:

Կ'երեւի մենք կրկնելու գնով պէտք է յիշեցնենք մի՛շտ հետեւեալը:

Հայ ժողովուրդը, այո՛, հողային պահանջ ունի Թուրքիային: Ան կը պահանջէ իր հողերը, պապեական հարապատ հողերը, Կորս քաղաքաւան է Թուրքիա: Բայց նախ եւ առաջ մենք կը պահանջենք, որ Անգարա ընդունի իր գործադրած Հայկական Յեղասպանութիւնը, կատարէ բարոյական ու նիւթական իր բոլոր հատուցումները, որ մէ ետք հերթը կու գայ անպայման հողային պահանջին, իմա՛ Մրեմտահայաստանին:

Իսմայիլ Ճէմ եւ անոր գործակիցները պէտք է յազդիտան, գիտեն՝ արդէն, որ «Հայաստան իր սահմանադրութեանն չի կրնար շնջել հողային պահանջի յօդուածը», որովհետեւ անիկա կը հանդիսանայ Հայ Դատի հիմնադրքը, Հայ Դատի այֆան եւ օմեկան: Հայաստան համար կրնայ ամէն բան սակարկելի ըլլալ թերեւ, սակայն երբ հարցը կը վերաբերի Հայկական Յեղասպանութեան եւ հողային պահանջատիրութեան, ոչ ինչ կարելի է սակարկել, մտածել նոյնիսկ անոր մասին: Հայ ազգային քաղաքական կուսակցութիւնները կը գործեն ի խնդիր Մրեմտահայաստանի պատահաբարութեան: Անոնք վստահաբար անխափան պիտի շարունակեն ընդմիշտ իրենց այդ երթը, մինչեւ ամբողջական Հայաստանի կերտումը:

Հետեւաբար Անգարա թող ի՛նք մտահոգուի՛մեր պայմաններով եւ իր այդ ցնորական նախապայմանները տալիս իր: Հայերէն լեզուով իսլամայական յարաբերութիւնները միայն այդ ձամբով կրնան հարթուիլ: Այլ ընտրանք չկայ:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

### HAMAZKAYIN FORUM 2002 ՅՐԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

ՊԱՏՐԱՎՈՒՄ ԷՔ ԱՄԱՌՈՒՄ ԱՐՉԱԿՈՒՐԳԻ ՉԵՐ ԾԵՐԱԳԻՐ ՄԵԱԿԵԼՈՒ

Մասնակցեցէ Համազգայինի ուսանողական մշակութային հաւաքին՝ երկու շաբաթ տեւողութեամբ

ՅՈՒՆԻՍ 13 - ՅՈՒՆԻՍ 27՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Այս հաւաքը առիթով պիտի ընծայէ՝  
- Ծանօթանալու հայ մշակոյթի պատմութեան եւ աւանդութիւններուն:  
- Հանդիպելու սփիւռքահայ թէ հայրենի երիտասարդ ուսանողներու:

- Մասնակցելու այժմեական միջոցառումներու ղախտութիւններու, մատուցած ծանօթ հայ մտաւորականներու եւ մասնագետներու կողմէ:  
- Չրուցելու եւ միտքեր փոխանակելու հայ երիտասարդութիւնը հետաքրքրող բազմաթիւ հարցերու մասին:

- Այցելելու հայկական պատմական կեդրոններ, ինչպէս՝ քանդակարարներ, եկեղեցիներ եւ տեսարժան վայրեր:

- Վայելելու տեղւոյն մշակութային, երաժշտական թէ քաղաքական կեանքը:  
- Կազմակերպելու մասնակցողներուն իսկ կողմէ՝ եզրափակիչ անճշտակալ համոզու - հաւաքը մը, վերապրելու միասին անցուցած յիշատակելի երկու շաբաթները հայրենի հողին վրայ:

Մամրամասնութիւններու համար կրնաք դիմել Համազգայինի Կեդրոնական Վարչութեան Գրասենեակ, Նշան Փալանճեան Ծեմարան, հեռաձայն՝ 01-372455 կամ 03-549917, ամէն օր, առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 4:00 եւ կամ այցելել մեր կայքէջը՝ www.hamazkayin.com

Մասնակցութեան տարիք՝ 17էն 26 տարեկան:

### ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿՐԱՅ Է

ԴԻՏԱԿԻ

ԱՊՐԻԼ - ՄԱՅԻՍԻ ԹԻՒՆ

ՄԵԹՆԻ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

# ՄԵՐ ՏՂԱՔԸ ՄԵՂՈՒԻ ՆՄԱՆ Կ'ԱՇԽԱՏԻՆ, ԻՍԿ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄԵԾ ՍԻՐՈՎ Կ'ԸՆԴԱՌԱՋԷ ՄԵՐ ԿՈՉԻՆ

ԿԸ ՀԱՍՏԱՏԵՆ Հ. Յ. Դ. ՍԱՐԴԱՐԱՊՅԱՏ ԵՒ ԹԵՀԼԻՐԵԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Մեթնի երեսփոխանական մասնակի ընտրություններն արդեն ավարտվել են, որի արդյունքում «Ազգակ»-ի այցելությունները Հ. Յ. Դ. մեր ակումբները, կը շարունակուին անընդմեջ: Երեկ, մեր թղթակիցները այցելեցին «Սարգսրապատ» եւ «Թէհլիրեան» ակումբները, ուր տեսակցութիւններ ունեցան տեղւոյն հերթապահներուն եւ ընտրական մեքենաներու պատասխանատուներուն հետ:



Սարգսրապատ ակումբից մէջ



Թէհլիրեան ակումբի աշխատանքէն պահ մը

Թէհլիրեան ակումբի հերթապահը կը հաստատէ, թէ արդէն իրենց շրջանին վերապահուած ընտրական տարածքներուն ստուգումը ամբողջացած է: Երջանի հայ քուէարկողներուն (Մար Երուսէֆ — Ամանոս) այցելութիւն տրուած է կամ հեռաձայնային հաղորդակցութիւն կատարուած է իւրաքանչիւրին հետ: Մեր այն հարցումին, թէ «ընկեր, բնաւ մերժող կամ դժգոհ կ'այ», հերթապահը եւ ընտրական պատասխանատուները կը պատասխանեն միաձայնութեամբ: «Երբեք, ընկեր»: Բնականաբար, մեր պատասխանատուները, գետնի վրայ ժրջան աշխատող մեր աննման

տղաքն ու աղջիկները ուրախ են այս երեւոյթին ի տես, ուրախ են, որ մեր ժողովուրդը ամենայն վստահութեամբ կը մօտենայ մեր կուսակցութեան, հաստատակամ այն՝ կ'ըսէ Դաշնակցութեան: Թէհլիրեան ակումբին մէջ աշխատանքային խմբակներու վերածուած են տղաքը, կ'աջ մակերպուած, ծրագրուած կ'աշխատին, կը հետապնդեն գործը, եւ արդէն իսկ պատրաստ են Յունիս 2ի ընտրութեանց: Եւ ամէնէն գօտեպնդիչ երեւոյթը այն է, որ աշխատող տարրերը ջանքերով մեծամասնու-

թեամբ երիտասարդ տղաք ու աղջիկներ են, որոնք կը հետեւին աւելի փորձառու եւ երէց սերունդի ցուցմունքներուն: Աւելի ճիշդ՝ անոնք հեզասահորէն կը գործակցին, ի խնդիր ընտրական աշխատանքներուն, որ ձեռով մը մաս կը կազմէ դաշնակցական գործին: «Թէհլիրեան էն» կ'անցնինք «Սարգսրապատ»: Տրուած ըլլալով, որ շրջանը շատ աւելի հաշտ է, աշխարհագրականօրէն է, աշխարհագրականօրէն է, հոն եռուզեռու աւելի ուշագրաւ է: Ժողովրդային տունը վերածուած է մեղուի փեթակի: Հերթապահը կ'ըսէ, թէ տղաքը զիշեր-ցերեկ կ'աշխատին, «զուրի քերելիք ժամանակ չունին»: ԼՈՍԱՅԿԱՆ ԸՆԿԵՐՈՒՆԵՐ, երիտասարդներ, պատանիներ, կուսակցական ընկերներ եւ պատասխանատուներ մէկ ոգի ու մէկ մարմին դարձած՝ միասնաբար կը հետապնդեն գործը: Անոնք իրենց շրջանի ցանկին վրայ ունին մեծաթիւ հայ քուէարկողներ, որոնց մօտ քարոզարան աշխատանքը գրեթէ ավարտած է արդէն եւ արդիւնքը հարիւր տոկոս դրական է: «Ոչ մէկ հարց,

## ԸՆՏՐԱՔԱՐՏԸ ԱՆՀՐԱՄԺԵՇՏ Է

Երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն կարելի չէ մասնակցիլ առանց ընտրական քարտի:

Բոլոր այն քաղաքացիները, որոնք ընտրական քարտ չունին, կրնան դիմել Հ. Յ. Դ. հետեւեալ ակումբները.

- ՊԵՅՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ Ազատամարտ ակումբ - Էշրեֆիէ՝ 01/449924
- Ռոստոմ ակումբ - Շայաշէն՝ 01/328471
- Նշան Փալանճեան ճեմարան - Արեւմտեան Պէյրութ՝ 01/375412
- Տիգրան Ծամիւր ակումբ - Մար Միայել՝ 01/580141
- ՖԱՆԱՐԻ ԵՒ ՌԱՌՈՒՏԱՅԻ ՇՐՋԱՆ Է. Ակունի ակումբ - Ֆանար՝ 01/891546
- Ռատուայի ակումբ՝ 01/683372
- ԱՐԹԻԻՍԻ ՇՐՋԱՆ Աղբալեան ակումբ՝ 04/722902
- Նաքքաշի կեդրոն՝ 04/410691
- Ժուլիէ ակումբ՝ 09/933096
- ԶԱՎԱՅԻ ՇՐՋԱՆ Գարեգին Նոյնի ակումբ՝ 01/877661
- ՆԱԿՐ ՄՈՒԹԻ ՇՐՋԱՆ Անի ակումբ՝ 01/895481
- ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏԻ ՇՐՋԱՆ Սարգսրապատ ակումբ - Մարաշ՝ 01/262949
- Ռուբեն ակումբ - Նորաշէն՝ 01/254322
- Ղո ակումբ - Արագած՝ 01/268647
- Ազիրեան ակումբ - Սիս՝ 01/261636
- Քաղաքապետարանի շէնքեր - «Բարգէն Սիւնի» կեդրոն՝ 01/489477
- Թեհլիրեան ակումբ - Ամանոս՝ 03/587498
- Սար Եուսէֆի ակումբ՝ 01/254709
- Նիկոլ Դուման ակումբ - Թրատ՝ 01/260912
- Քաղաքապետարանի շէնքեր՝ 01/263440

Հ. Յ. Դ. ԸՆՏՐԱԿԱՆ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍԱՐՄԻՆ

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ...

Շարունակուած Ա. Էջէն



Միշէլ եւ Միրնա Սըր՝ խօսքի պահուց

տասարդութեան նախարար Սեպուհ Յովնանեանի եւ Հ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչին, անակնկալօրէն վայր ժամանեցին նախկին փոխվարչապետ եւ երեսփոխան Միշէլ Սըր եւ Միշնի մասնակի ընտրութիւններուն Հ. Յ. Դաշնակցութեան գորակցութիւնը վայելող թեկնածու Միրնա Սըր — Ապու Շարֆի, որոնք ժողովուրդին կողմէ դիմաւորուեցան ծափողջիւններով:

Հ. Յ. Դաշնակցութեան անունով հայերէնով եւ արաբերէնով խօսք առաւ Միշնի Հանքէհեան, որ ողջունելի էր Սիշէլ Սըրի եւ Միրնա Սըր — Ապու Շարֆի, որ հայերէնով արտասանելի էր «կեցցէ՛ հայութիւն, կեցցէ՛ Դաշնակցութիւն» բառերը, դրուատեց Սըր ընտանիքին եւ Հ. Յ. Դաշնակցութեան միջեւ գոյութիւն ունեցող ձո տարուան սերտ յարաբերութիւնները: Իր կարգին, Մ. Սըր ողջունեց լիբանանահայութիւնը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որոնք ամէն առիթով կը փաստեն իրենց ազգային գիտակցութիւնը, ըսաւ ան: Անդրադառնալով հայութեան եւ Պուրճ Շարֆիի հանդէպ իրենց ուսուցիչ եւ կատարելու քաղաքացիական իրաւունքն ու պարտաւորութիւնը: «Դարձեալ հասած է հաւաքական գործի ժամը: Անհրաժեշտ է հաւաքական մասնակցութիւնը», ըսաւ ան:

## ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԵՒ ՏԸ ՄԻՍՈՒՐԱ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՀԱՐԱԿԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հանրապետութեան նախագահ գործիչ Լահուտ երէկ ընդունեց հարաւային Լիբանանի մէջ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Սթեֆան Տը Միսթուրան, որուն կ'ընկերակցէր Ֆինիլի հրամատար գործիչ Լալիթ Մոհան Թիւրարի: Քննարկուեցան հարաւի վիճակը, Ֆինիլի գործունէութիւնը եւ անոր գործակցութիւնը լիբանանեան բանակին եւ ապահովութեան ուժերուն հետ:

Տը Միսթուրը ըսաւ, որ նախանձանդիւր էր Պաապտա գալու, որպէսզի պաշտօնապէս շնորհակալութիւն յայտնէ նախագահ Լահուտի՝ Ֆինիլի վայելած նեցուկին եւ գորակցութեան համար, եւ փոխանցելու ՄԱԿի գործունէութիւնը՝ հարաւի եւ «Կապոյտ Գիծ»ի կայունութիւնը պահպանելու համար նախագահ Լահուտի ի գործ դրած ճիշդութիւնը: Հանդիպումը առիթ հանդիսացաւ քննարկելու նաեւ այլ հարցեր եւ լսելու տեղական ու շրջանային զարգացումներուն զօրով նախագահ Լահուտի տեսակէտը, աւելցուց Տը Միսթուրը:

Նախագահ Լահուտը երէկ նաեւ ժողով մը գումարեց բանակի ընդհանուր հրամանատար գործիչ Միշէլ Սիշէլ-Մանի հետ:

## ԻՐԱՅԷԼԵԱՆ ՈՏՆՉՊՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Իսրայէլեան ուժեր երէկ խախտեցին ՄԱԿի կողմէ ճշգրտած, հարաւային Լիբանանը իսրայէլէն բաժնող «Կապոյտ Գիծ»ը: Ղաթար գիւղին մօտ կէսօրէ առջ ժամը 11:00ին, իսրայէլեան զաղտնի սպասարկութեան անդամներ թափանցեցին լիբանանեան հողեր եւ թալլէթ ինքնազանի մօտ ստուգեցին իսրայէլեան ուժերու կառուցած ջրամբարակները, Ղաթար գիւղի շուրջ գետեղուած փշաթելերը, սպա ուղղուեցան դէպի արեւելք, ուր կը շարունակուէր իսրայէլեան պատրաստելու աշխատանքը: Ուսագանի գիւղին մօտակայքը: Մագարէ՛ Շրպայի եւ կողմին մէջ նկատուելի էր գինուորական փոխադրակառքերու «եռուզեռ»ը: Նշեալ աշխատանքներուն զուգահեռ, իսրայէլեան ուղղաթիւներ ցածին թռիչքներ կատարեցին Մագարէ՛ Շրպայի, Քֆարաշուպայի եւ Հուլայի վրայ, աւելի քան մէկ ժամ: Միւս կողմէ, երէկ առաւօտեան ժամը 5:00ին իսրայէլեան հրետանին Ռուսայէթ Ալմի եւ Թալլէթ Իտատրի կեդրոններէն կրակ բացաւ Թըպընի, Ժապալ Ռուսի, Շահայի, Այն էլ Ժոզի եւ Մագարէ՛ Շրպայի արեւելեան դաշտերուն վրայ:

## ՃԱՓՈՆԻ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ ԸՆԴՀ. ԳՈՐԾԱՎԱՐԸ՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՍՕՏ

Երեքշաբթի, 14 Մայիս 2002ին, Արամ Ա. կաթողիկոս իր գրասենյակին մէջ ընդունեց այցելութիւնը Լիբանանի մէջ ճափոնի դեսպանատան ընդհանուր գործադիր Սէյիթ Օկաուայի: Այս այցելութեան նպատակն էր Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ կատարուող ընկերային ծառայութեան ու մարդասիրական օժանդակութեան նպաստով՝ Այուրիէի Ազգային Բուժարանին նոր փոխադրակայք մը նուիրելով: Յայտնեց, որ ճափոնի դեսպանատունը անցնող տարի նման նուիրատուութիւն մը կատարած էր դարձեալ Մեծի Տանն Կիլիկիոյ հոգածութիւնը վայելող Ժիւլիէի «Թոշնոց Բոյնի»: Վեհափառ հայրապետը իր շնորհակալութիւնը յայտնեց այս նուիրատուութեան համար, միաժամանակ բարձր գնահատելով դեսպանատան մարդասիրական առաքելութիւնը:

## ԺԸՊՐԱՆ ԹՈՒԷՅՆԻ ...

Շարունակուած Ա. Էջէն

Ե. այս ընտրութիւններուն սկիզբէն իսկ ուշագրաւ էր թուէյնիի եւ ներքին գործոց նախարար Էլիաս Սըրի կեցուածքներու ներքաշնակութիւնը. աւելին, թուէյնի պաշտօնապէս զօրակցութիւն յայտնեց մրցակիցներու, միւս թեկնածուներուն եւ ոչ մէկ առիթ ինչպէս քննադատելու ինչ որ զաշնակցութեան, ըսաւ ան: Կապրիէլ Սըր իր հաղորդագրութեան մէջ ըսաւ, որ վերոյիշեալ պատճառներուն համար, եւ իր դաշնակիցներուն՝ նախկին նախագահ Ամին ժեմալիի եւ երեսփոխան Նեւիլ Լահուտի հետ խորհրդակցելէ ետք, կը յայտարարէ, որ թուէյնի համախոհական թեկնածու չէ եւ անկարելի է, որ ան իսկական համախոհութեան առանցք դառնայ: Հիւսիսային Մեթնի մասնակի երեսփոխանական ընտրութիւններու թեկնածու Ղասսան Մուխայպրի լրատուական գրասենյակը երէկ հաղորդագրութեան մը հաւատեց, որ չէ քաշած իր թեկնածութիւնը եւ վճռած է մղել ընտրական ձակաւամարտ մը: Հաղորդագրութիւնը հերքեց որոշ շրջանակներու տարածախառն այն տուրք, թէ Մուխայպրի հրաժարած է պայքարը շարունակելէ: Մուխայպրի անունը կ'առաջարկեն բազմաթիւ կողմեր, որպէս համախոհական թեկնածու, իսկ եթէ այս առաջարկին շուրջ ընդհանուր համաձայնութիւն չգոյանայ, ապա Ղ. Մուխայպրի համար համախոհական թեկնածու է ժըպրան թուէյնի, ըսաւ հաղորդագրութիւնը, ընդգծելով, որ եթէ համախոհութեան մէկ թեկնածուի շուրջ միաձայնութիւն չգոյանայ, ապա Մուխայպրի պիտի մղէ ընտրական ձակաւամարտը: Ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Էլիաս Սըր երէկ մերժեց մեկնաբանութիւն կամ կարծիք տալ «Նահար» օրաթերթի ընդհանուր տնօրէն ժըպրան թուէյնիի Մեթնի մասնակի երեսփոխանական ընտրութիւններու իրեն համախոհական թեկնածու ներկայանալուն մասին:

**ԿԱՂԸ՝ ԿԻՐԱԿԻ, 19 ՄԱՅԻՍԻՆ, «ԿԱԼԱ» ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8:30ԻՆ**

ՀԱՍՏԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱՒՈՐ **45**

**«ՔՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԻԱՆԷ» ԱՄԵԱԿ**

**ՊԱՐԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԵԼՈՅԹ**

**Պարուսոյց՝ ՖԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

**«MONNOT» քատերարահիւն մէջ, Թապարիս:**

# «ԲԱԳԻՆ»Ի

(ՀԱՆՂԵՍ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍԻ)

ԼՈՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ

ԲԱՌԱՄԵԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

## ՃՆՈՒՆԴ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Երբ Կ. Սասունի մեզ հանդիպման մը հրաւիրեց, Եղ. Պոյաճեանը, Վ. Օշականը, Տ. Ոսկունին եւ ես կայինք միասին: Երբ կ'ընդունուէինք նախնական քննարկումներ, որ տարբեր Բ. Փափազեանն ալ մաս կազմէ խմբագրական կազմին: Առաջ քննարկեց ժիրալը Աթթարեանին անունը, ապա խօսեցանք Պոյաճեանի մասին: Տ. Ոսկունի խանդավառութեամբ, Եղ. Պոյաճեան հրապարակեց չէր հաւատար ականջներուն:

Երբորդ նիստը պաշտօնական հանգամանք մը ունէր: Վերոնշեալ գրիչի մարտիկները բոլորն ալ (բացի ժիրալը) ներկայ էին արդէն, Կ. Սասունիի երկար տարիներու բնակարանին մէջ, Ուաթ - Ուաթ փողոց, հին կառոյցի մը երրորդ յարկը:

Խօսեցանք հանդէսի տարողութեան, էջերու թիւին, տպաքանակին, աշխատակցութեան հրահանգներուն մասին: Կարեւոր էր ընտրելիք եւ հնչուն անունով մը մկրտել նորածինը: Եւ որովհետեւ Կ. Սասունի պահանջած էր ինձմէ մտածել այդ մասին, սկսայ կարդալ նախապէս պատրաստած ցանկը:

Առաջինը, երկրորդը, երրորդը ընդունելութեան չարժանացան:

Չորրորդին տիկին Լոյա Սասունի, որ խոհանոցի դրան առջեւ կեցած մտիկ կ'ընէր, միջամտեց բարձրաձայն.

- Եղբա՛ւ, «Բագին» կարճ, խորհրդանշական, արտայայտիչ, մանաւանդ շարունակութիւնը կը սեպուի Պոյոյոյ «Ճակատամարտ»ի գրական բաժնի մեր «Բագին»ին:

- Ձայնը, գոռաց ապագայ քրմապետը, ճօճելով գաւազանը:

Գովասանքի համագոր եւ ժպտադէմ այդ սաստը հաճոյքով դիմաւորեցինք բոլորս: Համաձայն էինք, անխորտիք: Եւ որդեգրեցինք Լոյա Սասունիի վճիռը:

- Եղբի կամք քո, տիկին, դարձեալ Կ. Սասունի կնոջ՝ հանդիսաւոր, դեհ, հիմա համով սուրճ մը եփէ, որ խմենք:

Անուն մը գտնուած էր, կնքուած եւ միւսնունուած... հեթանոսաբար:

Ալ երկար չմնացինք: Իւրաքանչիւրս հրաւիրուեցաւ գրութիւն պատրաստելու երկու երեք թիւի համար: Խմբագրականը գրել ստանձնեց Եղուարդն ու Պոյոյոյ միասին: Առաջարկուեցաւ, որ ես ալ փորձ մը կատարեմ, իմ կարգիս:

Չորրորդ հանդիպումին եռանդուն գործի անցած էր լրիւ անձնակազմը: Իւրաքանչիւր անգամ ի ձեռքին ունէր առաջարկներով, ծրագիրներով բեռնաւոր մէկ - երկու էջ թուղթ:

Երկուրդը ու Պոյոյ միասնաբար գրած էին խմբագրական մը, ես ալ երկրորդ մը՝ առանձինս: Ընդունուեցաւ առաջինը, գրեթէ լրիւ (իմ գրութեանն առնուեցաւ խորագիրը՝ «Բագինի առջեւ» եւ այլ տող մը): Այլեւս կազմ ու պատրաստ էինք աշխատանքի, Բիւրոն քննած էր հարցը Ըջօրէն: Որոշուեցաւ գերագոյն հանդիպում մըն ալ ունենալ պատասխանատու ալ անձերու ներկայութեամբ, ապա իսկոյն անցնիլ գործի:

Չուշացաւ այդ օրը: Հաւաքուեցանք Հ. Յ. Դ. ակումբի (հինը, Փարսոնի ապարանքին մերձ) պաշտօնական հիւրասենեակ-ժողովատեղիին մէջ, Կ. Սասունիի նախագահութեան տակ: Կր հակէին Սր. Երրորդութեան մեծադիր լուսանկարներն ու զինանշան-դրօշակը:

Կ. Սասունի հակիրճ գեղեցում մը տուաւ տարուած աշխատանքներուն մասին: Ապահով նկատեց ձեռնարկին պիւնտէն եւ յարատեւութեան գրաւակաւները ու ճշդեց գործադիր մարմինը. ինք՝ վարիչ-խմբագիր, Ե. Պոյաճեան եւ Պ. Մնայեան՝ խմբագիր, Տ. Ոսկունի՝ նիւթական գործառնութեանց պատասխանատու, մնացեալները՝ խմբագրական կազմի անդամ, իւրաքանչիւրը որոշ գործի մը կամ բաժնի մը պատասխանատու: Մնաց արտօնատէրի հարցը եւ հոս կնճռոտեցաւ խնդիրը:

- Բայց առաջին օրէն այդ անձը որոշուած էր, - առաջ նետուեցաւ Տ. Ոսկունին, - Գեղարդը պիտի ըլլայ արտօնատէրը հանդէսին, որովհետեւ պետութեան մօտ միայն ինք կը լրացնէ պահանջուած պայմանները:

Վարկական մը քար լուծութիւն տիրեց, ապա փորձառու եւ փորձագէտ մարդու իր ճկունութեամբ նախագահը պատասխանեց:

- Գեղարդը՝ աչքիս լոյս: Բայց կուսակցութեան հովանին վայելող ձեռնարկի մը պատասխանատուն շարքային մը պէտք է ըլլայ յաջ պետութեան:

Ոչ ոք ըսելիք ունէր: գրութիւնները հակեցան գետին եւ հարցը մնաց անլոյծ:

Ես՝ ծպտուն մ'իսկ չհանեցի, որովհետեւ Լիբանանի Լրագրողներու Սենտիքայի անգամի հանգամանքով՝ միայն լոյս ընծայման գործին օժանդակել կը ցանկայի: Մնացեալը բոլորովին երկրորդական էր, եւ Կ. Սասունիի մատնանշումն ալ հաւանաբար իրաւացի:

Դուրս ելանք ակումբէն: Մուտք կոխած էր եւ եկեղտը-բարյութը կը ցոլային: Փողոցն ի վար սկսանք իջնել բուրս իրարու ետեւէ, մոլորին վրայ զոյգ-զոյգ եղած:

(Շար. 3)  
(Փարիզ)

## 3. ԳԵՂԱՐԳ

# ՄԵՆՔ ԳԻՏԱԿԻՑ ԵՆՔ ՄԵՐ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՏԵՐՆ ԵՆՔ ՄԵՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՆ

ԸՍԱԻ ԱՐԱՀԱՄ ՄԱԹՈՍԵԱՆ

Մեր օրերուն, յատկապէս բարգաւաճ երկիրներուն մէջ, հետզհետ կը շեշտուի անհրաժեշտութիւնը ապահովագրական ընկերութիւններուն, որոնք մեծ դեր ունին այսօր ոչ միայն կեանքի ապահովագրական մեղ իմաստով, այլեւ՝ ճարտարարուեստին, տնտեսութեան, առեւտուրին մէջ, ուր առանց ապահովագրութեան գրեթէ կ'անհամարձակուի ամէն բան:

Այս ծիրին մէջ «Ազդակ» շահեկան հարցազոյց մը ունեցաւ Լիբանանի Ապահովագրական Ընկերութեան խմբագրողի նախագահ Աբրահամ Մաթոսեանի հետ, որ ծանօթ անուն մըն է լիբանանահայութեան՝ իբրեւ «Մաշրէթ» ընկերութեան նախագահ եւ ընդհանուր տնօրէն, Պէյրութի Զաղաքապետութեան անդամ եւ հայ կեանքին մէջ իբրեւ Զաղաքական Ժողովի անդամ:

Ստորեւ՝ հարցազոյցը, որուն ընթացքին Աբրահամ Մաթոսեան արտայայտուեցաւ յայտ անկեղծ ու սրտբացօրէն:

ՀԱՐՑՈՒՄ.- Դուք նաեւ անգամ էք «Տը Ինչու»-ընտ Ենչընըլ Քառուսը»-ի: Կարելի է բացատրել, թէ ինչ է այս մարմինը:

ՊԱՏԱՍԻԱՆ.- Այս մարմինը ձեռքով մը օրէնադիր մարմինն է ապահովագրական ընկերութեանց: Ան է, որ կը սահմանէ այս մարզին մէջ բոլոր օրէնները, ան է, որ ապահովագրական ընկերութեանց միջեւ միջեւ բոլոր տեսակի հարցերը լուծելու կողմէն է, ինքն է դարձեալ ընկերութեանց իրաւունքի սահմանները ճշդողը, ապահովագրական ամբողջ մեքենան համակարգողը: Մէկ խօսքով՝ այս մարմինը ապահովագրական ընկերութեանց գերագոյն մարմինն է:

ՀԱՐՑՈՒՄ.- Կ'իմացանք, որ ապահովագրական արարական միութիւններու ընդհանուր ժողովը 2004ին տեղի պիտի ունենայ Լիբանանի մէջ՝ շնորհիւ ձեր ջանքերուն: Կարելի է այս մասին հանգամանորէն խօսիլ:

ՊԱՏԱՍԻԱՆ.- Իրաւամբ, վեց ամիսէ ի վեր մեծ աշխատանք կը տանիմ, որ այս ժողովը կայանայ Լիբանանի մէջ: Այնքան թեւեւ չեմ անցնիլ թեկնածուներն էին: Լիբանանի թեկնածու չէր, բայց ի վերջոյ յաջողեցանք արարական երկիրներուն միջոցով յաջողցնել Լիբանանի թեկնածութիւնը եւ անոր տալ առաջնահերթութիւնը:

Արարական երկիրներու ապահովագրական ընկերակցութիւններու ընդհանուր այս ժողովը, որ պիտի գումարուի 2004ին, Լիբանանի մէջ, 25րդ ժողովն է: Այն երկիրներ, որ կը հիւրընկալէ ժողովը, կը նախագահէ նաեւ ժողովները: Այս պարագային, իբրեւ հիւրընկալ երկիր, բնականաբար Լիբանան պիտի ըլլայ ժողովի նախագահողը, իսկ իբրեւ Լիբանանի Ապահովագրական Ընկերակցութեան նախագահ՝ ես պիտի ըլլամ ժողովը վարողը, ժողովին նախագահը:

Անկիւն. մինչեւ յաջողող ընդհանուր ժողով մը, որ կը գումարուի 2006ին (երկու տարին անգամ մը), Արարական երկիրներու Ընկերակցութեանց նախագահը կը մնամ ես՝ իբրեւ վերջին ժողովին նախագահը: Ցաւը որ ժողովին վայրը ցարդ չէ ճշդուած:

ՀԱՐՑՈՒՄ.- Ի՞նչ է այս ժողովին Լիբանանի մէջ կայացման առաւելութիւնը երկրին համար: Նախապէս Լիբանանի Բիւրոնկալած է այս ժողովը:

ՊԱՏԱՍԻԱՆ.- Բնականաբար երկիրը այս պատճառով դրամ կը մտնէ: Պահողները, վաճառատուները, բոլորը դրամ կը շահին, որովհետեւ ի վերջոյ շուրջ հազար ընկերութիւններէ ներկայացուցիչներ կու գան (իւրաքանչիւրէն առնուազն երկու հոգի), ինչ որ նկատուելի թիւ կը կազմէ անշուշտ: Ժողովը կը տեւէ մէկ շաբաթ: Ինչ կը վերաբերի այն հարցումին, թէ առաջին



անգամ մըն է, որ Լիբանան տեղի կ'ունենայ այս ընդհանուր ժողովը, պատասխանը քիչ մը տարօրինակ է՝ «այո» եւ «ոչ»: Ինչո՞ւ: 1992ին այս ժողովը առաջին անգամ ըլլալով գումարուեցաւ Լիբանանի մէջ, բայց չէր յիշէք, օրին 6 Մայիսի խնդիրները պատահած էին եւ ժողովականները շատ քիչ վերադարձան՝ անկազմակերպ միջոցառումներով: Այսօր քիչ մը քիչ քիչ սինքն անունով տեղի ունեցած է, բայց տե՛ ֆաքթօ՞ն՝: Յուսանք այս 25րդ ժողովը, որ արժանի յոբանջան է իտալիական պատկերի յաջողութեամբ:

Հ.- Պրն. Մաթոսեան, իմացանք նաեւ, որ դարձեալ շնորհիւ ձեր ջանքերուն «Քարթ օրանթ»-ը իրականացած է արդէն: Այս մասին ինչ ունիք ըսելիք:

Պ.- Ճիշդ է, ես մեծ ներդրում ունիմ այդ կարեւոր քարտին իրականացման գործընթացին մէջ: «Քարթ օրանթ»-ը ինքնաշարժներու շրջագայութեան ապահովագրական քարտն է, միացեալ քարտը՝ արարական երկիրներու տարածքին: Առանց այդ քարտին, իրաւունք չունին ինքնաշարժով անցնիլ արարական երկիրներու սահմանները, սկսեալ Սուրիայէն, Ցորդանանէն եւ Իրաքէն: Այսօր «Քարթ օրանթ»-ով այդ ղտուարութիւնը հարթուած է արդէն: Սակայն կայ աւելի կարեւորը: Հիմա մեծ աշխատանք կը տանինք արդէն, եւ այս գծով Մարտի մէջ երկու շաբաթ առաջ գումարեցինք կարեւոր ժողով մը, որ «Քարթ օրանթ»-ը եւ եւրոպական «Քարթ վերթ»-ը նոյննախն: Վերջինս ամբողջ Եւրոպայի տարածքին ընդունուած է եւ «Քարթ օրանթ»-ը անոր արարական տարբերակն է: Ծատ կը փորձենք եւ մօտիկ ապագային պիտի յաջողինք, որ մեր «Քարթ օրանթ»-ը ընդունուի նաեւ Եւրոպայի մէջ, փոխադարձ գործակցութեամբ «Քարթ վերթ»-ի: Ցայտնեմ, որ «Քարթ վերթ»-ին մէջ Լիբանան ընդգրկուեցաւ շնորհիւ մեր ջանքերուն՝ օրէնքի յատուկ «չըջանցումով» մը:

Հ.- Այսօր ի՞նչ վիճակ կը պարզեն Լիբանանի մէջ ապահովագրական ընկերութիւնները յարաբերաբար Արեւմուտքին: Այսինքն, երբ ի վերջոյ պարտադիր պիտի դառնայ ապահովագրութիւնը բոլոր մարզերուն մէջ:

Պ.- Առաջին հերթին յայտնեմ, որ ինքնաշարժներու ապահովագրութիւնը մօտ օրէն պիտի դառնայ պարտադիր: Այսօր քիչ մը քիչ սինքն անունով տեղի ունեցած է, բայց տե՛ ֆաքթօ՞ն՝: Յուսանք այս 25րդ ժողովը, որ արժանի յոբանջան է իտալիական պատկերի յաջողութեամբ:

Հ.- Իբրեւ Ազգ. իշխանութեանց եւ Քաղաքական Ժողովի անդամ՝ դուք դերակատարութիւն ունիք ազգային ազգային մէջ: Ի՞նչ ունիք ըսելիք մեր ժողովուրդին, հայ համայնքի գաւազաններուն:

Պ.- Ես ամէնէն աւելի պիտի ուզէի, որ այսօր մեր երիտասարդութիւնը պատրաստ ըլլայ, որեւէ առիթի՝ ներկայանալու պետական պաշտօններու թեկնածութեան: Մենք բոլոր մարզերուն մէջ պատրաստ ցանկեր ունենանք կարող եւ համապատասխան պաշտօններու առաջ տողը եւ աղիկներու, որպէսզի յարմար պահուեն զանոնք կարելի լոյս ներկայացնել պետութեան: Այդ ձեռքով է, որ մենք պաշտպանած եւ տէր կողմնաձեւ կ'ըլլանք համայնքային մեր իրաւունքներուն: Մանաւանդ Պէյրութի պարագային, ուր ես անձամբ աւելի դերակատար եմ իբրեւ քաղաքապետութեան անդամ: Այսպէսով, մենք՝ հայերս, որ այս երկրին մէջ ճակատիք տիրեց ունինք, վաստակ ունինք, տէր կանգնած կ'ըլլանք մեր իրաւունքներուն: Մենք գիտակից ենք մեր բոլոր պարտաւորութիւններուն, նաեւ տէր ենք մեր իրաւունքներուն, զորս կրնանք պարտադրել միայն մեր տիրական ներկայութեան պետական բոլոր մարզերուն մէջ:

Հ.- Ահա ի՞նչ վիճակ կը պարզեն Լիբանանի մէջ ապահովագրական ընկերութիւնները յարաբերաբար Արեւմուտքին: Այսինքն, երբ ի վերջոյ պարտադիր պիտի դառնայ ապահովագրութիւնը բոլոր մարզերուն մէջ: Իբրեւ Լիբանանի

# ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐ ՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԻՆԻ ԺՈՂՈՎԻՆ

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի միջկրօնական երկխօսութեան Խորհրդատու մարմինը իր հերթական ժողովը գումարեց Սթրասբուրգի մէջ, Շուէտ, 7-12 Մայիսին:

Խորհրդատու մարմինին գլխաւոր պարտականութիւնն է ուսումնասիրել եւ փնտռել նոր կերպեր եւ միջոցներ՝ առաւելագոյն չափով աշխուժացնելու համար աշխարհի կրօններուն միջեւ երկխօսութիւնն ու կենդանի հաղորդակցութիւնը:

Չորս օրերու վրայ երկարող հաւաքական եւ խմբական աշխատանքով ժողովականները հանգամանօրէն քննարկեցին այն կէտերը, որոնք կրնան հաղորդակցութիւնն ու գործակցութիւնը կրօններու միջեւ աւելի կենդանի եւ պտղաբեր դարձնել: Այնուհետեւ ժողովականներէն իւրաքանչիւրը ներկայացուց իր պատկերացումները արդիւնաբեր երկխօսութեան առնչութեամբ՝ մեկնելով իր միջավայրին թելադրած փորձառութեան:

Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Խորհրդատու մարմինի ժողովին իր մասնակցութիւնը բերաւ Թեհրանի Հայոց թեմի Առաջնորդ Սեպուհ Եպ. Մարգիսեան: Սրբազանը խօսեցաւ իրանի մէջ տեղի ունեցող երկխօսութեան եւ կրօններու միջեւ յարաբերութեան մասին, շեշտելով անոնց իւրաքանակութիւնը եւ նշելով, որ անոնց իր գործնական մասնակցութիւնը կը բերէ մեր եկեղեցին:

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԲԵՄԱԿԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆ

28 Մայիսին սկսեալ Հայաստանի մէջ պիտի բեմադրուի արժանիքիցի համառաւար թատերագիր Ռոպերթ Բոսայի «Նանէ» թատերախաղը՝ բեմադրութեամբ Յակոբ Լազարեանի:

«Բեմական խաչմերուկ Մշակոյթի կեդրոն» հիմնարկին նախաձեռնութեամբ իրագործուած այս միջոցառման գլխաւոր դեր կատարելու հրաւիրուած է նախկին լիբանանահայ, Համազգայինի «Գասպար Իփէկեան» թատերախումբի ղեկավարներէն Գալուստ Զանաւազեան: Ան հիմնադիրն է Պուէնտո Այրէսի «Ժորժ Սարգիսեան» թատերախումբին, որ երեք տարի առաջ Պէյրութի մէջ հիւրաբար բեմադրեց յիշեալ թատերախաղը իր դերակատարութեամբ:

«Նանէ»-ն պիտի ներկայացուի նախ Երեւանի, ապա Հայաստանի տարբեր քաղաքներուն եւ շրջաններուն մէջ, մինչեւ Յուլիս ամսուն վերջը:

# ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

Յառաջիկայ Կիրակի, 19 Մայիս 2002ին, Անթիլիասի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յոգեբաւ սուրբ եւ անձնապատարազի, տեղի պիտի ունենայ վարդապետական աստիճանի տուչութիւն Ա. Աթոռոյ միաբան հայրերէն:

ԸՈԳԸ. Տ. ՄԱՍԻՍ ԱԲԳ. ԶՕՊՈՒՅԵԱՆԻ  
ԸՈԳԸ. Տ. ՍԻՓԱՆ ԱԲԳ. ԸԵՉԵՃԵԱՆԻ  
ԸՈԳԸ. Տ. ՎԱՐԱԳ ԱԲԳ. ԹՕՓԱԼԵԱՆԻ  
ԸՈԳԸ. Տ. ՆԵՐՍԵՍ ԱԲԳ. ՄԵՐՃԱՆԵԱՆԻ  
ԸՈԳԸ. Տ. ՅՈՒՄԻԿ ԱԲԳ. ՄԱՐՏԻՆՈՍԵԱՆԻ

Տուչութեան արարողութիւնը պիտի կատարուի եւ պիտի քարոզուի

ԳԵՐԸ. Տ. ԵՓՐԵՍ ԱԲԳ. ԹԱՊԱԳԵԱՆ

Արարողութեան պիտի հանդիսապետուի  
**Ն. Ա. Օ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Սիրով կը հրաւիրուին մեր եկեղեցւոյ հաւատացեալները, ներկայ գտնուելու սոյն արարողութեան:

ԴԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (ՇԵՆՏ)

# Զ Ր Ո Յ Յ

ՆԻՒԹ՝  
ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ ԵՒ  
ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ՛  
**ՅԱԿՈՒԲ ՀԱՒԱԹԵԱՆ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 18 Մայիս 2002, երեկոյեան ժամը 6:30ին, ՇԵՆՏՍԻ Կեդրոնատեղիին մէջ, մայրավանք, Անթիլիաս:

Երաւեր

# Գրական Էջ

## Մ Ա Ս



Ս. ՀՈՒՓՄԻՍԵ

### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՒ ՄԵՍՐՈՊԱԲԱՆԴ

«Հայց. Եկեղեցին թանկ է մեկ համար: Նա մե՛րն է, մեր ազգային եկեղեցին եւ մեր ազգային ամենամեծ ստեղծագործութիւնը, ամենամեծ ժառանգութիւնը մեր նախնեաց թողած: Նորա պահպանութիւնը, կարգաւորութիւնը, յառաջդիմութիւնը Սփիւռքի հայութեան պահպանութեան երաշխիքն է»:

ԳԱՐԵԳՐԵ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆՅ

Հայաստանեայց Եկեղեցւոյ նորագոյն ժամանակներու լուսապայծառ դէմքերէն մէկուն, օտար աստիճանի հայ եկեղեցիին հիմքը վերախարսխած Գարեգին Ա. հայրապետին վերի պարզ, բայց իր պարզութեամբ մէջ խորախորհուրդ հաստատումը որքա՛ն հարազատ եւ անմիջական հնչեցուցեամբ կ'արձագանգէ այս օրերուն, երբ քիչ մը ամենուրեք, Հայաստան աշխարհի քրիստոնեաբոյր աւաններէն մինչեւ հեռուոր ծագերը Սփիւռքի կը տիրէ հոգեմտաւոր եւ բարոյական այս անբարձր համընդհանուր հիւանդագին վիճակ մը: «Հոգու սով»ի այս նորագոյն օրերուն, մայրերու ամիս Մայիսին մայրաշնչտ երանգներով ու գարնանացոյ տրամադրութիւններով քաղցրանալէ ետք, մեզ ծնած, սնած ու կեանքին նուիրած հայ մօր քաղցրագէտ պատկերին առջեւ խունկ ու աղօթք ծխելէ անմիջապէս յետոյ, իր արեան թելադրանքներուն ունկնդիր հայ մարդը անխուսափելիօրէն կը պարանայրի Հայաստանեայց Եկեղեցւոյ անվարձաճանճորդները լուսաւորած այն միւս մայրերուն դիմաց, որոնց համար ան արդարօրէն ընտրեց *Մայրեհի* լեզու, *Մայր* եկեղեցի եւ *Մայր* Հայաստան նշմարագոյն սահմանումները: Եւ բնականաբար, այս սահմանումներուն կը յաջորդեն հայ ազգի գոյութեան հետ առնչուող բարձրորակ հարցադրումներ եւ հարցականները բարձրաշնչտ բարձրացնող պատասխաններ, որոնք կը շնչտեն ու կ'ընդգծեն անփոխարինելի արժէքը հայ եկեղեցիին՝ Թորոքեան ցեղի ժառանգորդներուն գոյատեւումը, հզօրացումը եւ քաղաքակրթական ինքնուրոյն հարստութեամբ դէպի յաւերժութիւն ձգուող ստեղծագործական երբէր ամրապնդելու ուղղութեամբ:

Ս. Թադէոս եւ Ս. Գաբրիէլի մտաբանութեան արիւնդով Հայաստանի սրբաւորը հոգին վրայ սերմանուած ու ծաղկած քրիստոնաւանդ եկեղեցին, այսպէսով, տակաւ առ տակաւ կը դառնայ ոչ միայն ազգային հարստութիւն, այլեւ՝ բարախուն սիրուն ու հոգին հայ մշակոյթին: Ակնադրիւրը հայ գիրին, երաժշտութեան, գոյնին եւ կերպարին, որոնց նպատակաւայց յաւերժական երբէր պիտի հանդիպէր նախնայական խոչընդոտներու եւ փորձութիւններու, եթէ հայ բանաստեղծն ու երաժիշտը, մանրակարիչն ու նարտարապետը զինուած չըլլային հայ եկեղեցւոյ ազգային վահանով, հաւատքին սուրով եւ մեր սուրբ հայրերուն յաղթանակելու հայկեան ուխտով:

Քրիստոնեական հայադրոյժ վեճակամութեամբ: Անանձնականութեամբ: Գերագոյն յանձնառութեամբ: Սայաք Նովաները դէպի նահատակութիւն, աւելի ինչո՞ւ անմահութեան խորհրդն է վեր բարձրացուցած այն ոգեղէն ուժով, որ Հայց. Եկեղեցին իր քարեղէն գօրութեան փոխադրեց շնչաւոր ու ոգեշնչող անսպառ ուժի բարձր բարձրներուն, դարձաւ կենդանի վկայութիւն՝ հայ ազգի կենսելի մէջ եւ հայութեան հաւաքական կեանքը իմաստաւորեց յաւերժաբարբառ գանձերով, նշմարութիւններով ու խորհուրդներով:

Ահա թէ ինչու Հայց. Եկեղեցին եղբայրացաւ բացարձակ ժամանակին հետ եւ մի շտ գարձաւ Արարիչին պատգամներուն՝ սիրոյ, բարիի, գեղեցիկի, զոհաբերութեան, հաւատարմութեան եւ առաքինի մնացեալ արժանիքներուն դպիրն ու պատարագիչը:

Ձոհն ու գոհաբերը՝ Մշտոցի աշակերտներէն սկսեալ եւ մինչեւ նորագոյն խնկարկունքը հայ գիրին, որոնց հոգիին ակունքներէն անդադար լուսնառագայթող պատարագին շնորհիւ կեանքի եւ ծշմարտութեան աղբիւր Քրիստոնեութիւնը հազաւ հայկերպ պատմուեան ու նկարագիր, իսկ հայ ոգիին ոսկի լոյսը կրկնապատկուեցաւ, բազմապատկուեցաւ, բերապատկուեցաւ գեղեցկօրէն Յատեմական կենդանութեան յաւերժանուէր երանգներով:

Եղաւ խօսք լուսելէն եւ գրականութեան քրիստոնեաժին՝ հայ գիրին եւ արուեստի տանարին մէջ, որուն իրաւ քարգմաններէն կրնա՞մ հանդիսանալ ըսովի սիւնակները լուսաւորող այս քիչ ծանօթ գրութիւնները...

Ս. ԿՈՒՐԿՈՍԵԱՆ

Մաս առ մաս  
մասը օրինակ ափսէին  
Կը բաժնուի կը բաշխուի մեր միջեւ -  
մեր մասնիկով ամբողջական նկանակին մաս կը կազմենք մէկ առ մէկ  
կը մէկտեղուինք մէկ հացի շուրջ մեր անհամար մասերով:

Տառապանքին համը կ'առնենք - կը մասնակցինք մենք անոր  
Չոհագործման միւր կ'ուտենք - մեր գոյութեան մաս կ'ընենք  
Մեկ վիճակած ցարի բաժնէն կը կշտանանք ու չենք ուզեր ալ իր մասին  
մտածել  
Մեր վերքերն ալ մենք կը թաղենք մեր էութեան ամէնէն խոր մասին մէջ -  
Մասը նորոգ մորթն է անոնց եւ ամէնուս կրահ կ'ըլլայ աննուա՞...

Յաղթանակի նշխարն է ան պատուական  
Արեամբ շահուած նուիրական աւարն է ան դարերն ի վար աննուապ  
Գոյատեւման պայքարի դեղ մոգական  
Որուն ամէն ձեռք կ'երկարի իբրեւ կապողը փրկարար  
Իբրեւ հրաշք, ամենարոյժ բալասան  
Օտարութեան խոցերուն դէմ - ընտելացած խայթոցին դէմ բազմադիմակ  
օձերու...

Երբ ամէն ոք  
Մաքրամաքուր թաշկինակով ծրարած  
Կը տանի տուն ու կը դնէ կիրակնօրեայ սեղանին  
Ճաշէն առաջ մասունքի պէս կու տայ ծերին մանուկին  
որոնք դողդոջ կամ վարանոտ խաչ կը հանեն երկիրած  
ու յոտութեամբ կը ճաշակեն մասն իրենց -  
Անոնք կարծէք կ'ուտեն աճիւնն աստուածատիպ նախաօր մը անծանօթ  
Շիտակ խաչուած կամ գլխիվար - առիծներէ կամ մարդերէ յօշոտուած  
Անհաւասար կոնի մէջ կամ հաւասար մտրակի տակ սպաննուած չարաչար  
Անարգութեան շղթային տակ կամ գերութեան քծինքին տակ ճգնուած  
Յետոյ յանկարծ աւերներէն, խարոյկներէն, գանկէ շինուած բուրգերէն  
Գողգոթայէն անպատու  
Հակայօրէն կորոզացած հերոսի մը - կարծէք անոնք հզօր միւր կը ծանեն...

Այսպէս մենք  
Կը բաժնուինք կը բշխուինք իրարու -  
Հայրենական մեծածառնազ սեղանին  
Կը մասնակցինք ինքնամատոյց ախորժով  
Հոն թէ փշրանք կ'ըլլանք հացի, եւ թէ ձեռք մը այդ փշրանքին երկարած  
Մէկ պատառով կը կերակրենք ամէնքդ մէկ - կը կշտանանք մէկ մասով  
Կը տարածուինք իրարու մէջ - ծովերէ ծով - մինչեւ անցեալն  
հեռուոր...

Մենք որքան ալ տարանջատուինք - հոս հոն ցրուինք մաս առ մաս  
Օրինակ մասի պնակին շուրջ կը միանանք յաւիտեան:

ՋԱՐԷԿ ԽՐԱՆՈՒՆԸ

### ՕՏԱՐԻ ՄԸ ԿԱՐԾԻՔ


## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Կրօնական բովանդակ պատմութեան մէջ չկայ բան մը, որ Հայաստանեայց պատկանելի եկեղեցիին չափ ուժգին ազդէ երեւակայութեանս եւ խանդավառէ գիտ համակ:

Պատճառը անոր հնուցիւնը չէ ստակ: Հաստատութիւն մը կրնայ պատկանելի ըլլալ եւ սակայն՝ ոչ չհանկան: Պատճառը անոր կազմութիւնն ալ չէ, թէ եւ ուշագրաւ ու հոյակապ է այդ: Պատճառը սա է մանաւանդ, որ այս եկեղեցին ամէն ուրիշէ աւելի ազգի մը հոգիին մարմնացումը կը ներկայացնէ աշխարհի վրայ: Թանձր այն խաւին տակ, որ տգիտութեան ու նախապաշարման դարեր անոր շուրջ գոյացուցած են իր գեղեցկութիւնը եղծանելու եւ կենսաւէտութիւնը չքացնելու համար, անմահ կեանքի մը կենդանի հոգին կը բարախէ տակաւին:

Խաւարի շրջաններուն դէմ Քրիստոսի սուրբ անունով մերթ պայքարող, մերթ անպատմելի հայածանքի տակ յօշոտուող եւ արիւնող, մերթ խաղաղ օրերու մէջ քրիստոնէական հաւատքի յաղթական օրհներգները եղանակող, միշտ կենդանի, միշտ հաւատարիմ եւ յաւիտեան յուսանք այդ հոգիին տեսիլն է, որ կը հրահրէ ինչ կը բոցավառէ քրիստոնեայ հաւատացեալին երեւակայութիւնը եւ կրօնական ջերմեռանդութիւնը:

Հայ ազգութեան այս հոգիին ազգեցութիւնը ո՛չ մէկ ժամանակ աւելի խորապէս զգացած եմ, քան երբ կը կանգնէի հեռուոր Հայաստանի լռին հովիտի մը վաղեմի մէկ վանքին շրջափակին մէջ: Ո՛հ, ի՛նչ պրքանխօս լռութիւն էր ան: Եւ յետոյ, իւրաքանչիւր գիւղի, աւանի եւ քաղաքի քարուկիր ամուր եկեղեցին, զօղանջող գանգակը, աղօթքի եւ պաշտօնի անվերջ փամբեր, մշտաբաց դուռը (ամբողջ տասնվեց դար) ինչեր, ինչեր կը յայտնեն այն ոգիին նկատմամբ, գոր ո՛չ



Հուրը, ո՛չ սուրը եւ ոչ ալ ժամանակը կրցած են մարել: Երբ այսպիսի մտածումներու մէջ թաղուած կը կանգնեմ ես հայկական տաճարի մը մէջ, փոյթ չէ՛ որ չափ ալ անփառունակ ըլլայ այն, եւ կ'ունենանք մեծ տարանի ընթերցում կամ պատմական շարականներու վեճ եղանակները կամ հոգեշնչելի աղօթքի մը մատուցումը, խորապէս կը յուզուի սիրտս: Հայ մը ի՛նչպէս կրնայ անտարբեր կենալ Ազգին այս մայր ոգիին առջեւ, ի գուր ջանացած եմ հասկնալ:

Հայաստանեայց Եկեղեցիին արմատական գաղափարն է իր թեւերուն մխիթարար ջերմութիւնը եւ հովանին տարածել ամէնուն վրայ, որոնք հայ ծնած են: Հայաստանեայց Եկեղեցիին նկատմամբ այս աւելի ճշմարիտ է, քան ուրիշ որեւէ ազգային եկեղեցիի նկատմամբ: Եւ խոստովանելու ենք, թէ այս գաղափարական ան հասարակ լաւ պահպանուած է: Բոլոր քրիստոնեաներուն հանդէպ թոյլտուութիւնն ալ ուրիշ մէկ որոշ յատկութիւնն է Հայաստանեայց Եկեղեցիին:

Ահա թէ ինչու Հայաստանեայց Եկեղեցին կ'ազդէ իմ երեւակայութեանս, եւ թէ ինչու կը ստիպուեմ ըսել, որ բարեբախտ են այն հայերը, որոնք իրենց հոգեւոր ժառանգութեան թանկագին յարգը կը զգան:

ՀԵՐՊԵՐԹ Մ. ԱԼԵՆ(\*)

(\*) ՀԵՐՊԵՐԹ՝ Ա. Ա. Լ. Ե. ամերիկացի միսիոնար մը: Մեծ է Խարբերդ՝ 1865ին: Ուսումը ստացած է Ամերիկայ, Պոսթրիմի մէկ քոլեճին մէջ, եւ վերադարձած Խարբերդ: Անկեղծ հայասեր մը, եւ հայ եւ արեւելախորեհ տիրապետած է հայ լեզուին եւ ծայրայեղ հայկական շրջանակներու մէջ: Մեռած է 1911ին:



Ս. ԳԵՂԱՐԴ

### ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

#### Ս. ԹԱԴԵՈՍԻ ՎԱՆՔԸ

«Թադէի վանուց ձեռնիկ ինձ դիպաւ»  
Հ. Ղ. ԱԼԵՆԱՆ

Ուրեմն կայ դեռ վանք մը հոն, Չանգիւմարի  
Գետէն աղիւն, վանք մը պահած  
գեղեցկութեան  
Խորհրդաւէտ իր կերպարանքն անջնջելի,  
Բրիւսձ ժայռին ծոցէն աղբիւր ոսկեբերան...

Ըլլայի՛ ես ուխտագրնաց, եւ անցեալի  
Յուշերուն գանձը տանէի, երբոր աշնան  
Այգեստանին մէջ ամէն ծառ է խնկաման.  
Եւ խորանին առջեւ իմ սիրտըս այրէի

Անվերջ, մինչեւ հատնիլն անոր շարականի  
Ալիքներուն մէջ մեղրահոս ու վերապէր  
Աճիւնին մէջ կաթիլ մ'արիւն սրբանուէր:

Եւ հոն թողուր իր անշէջ հեռքը ծիրանի,  
Վրբան վարդի կամ թոշուի մը քարեղէն,  
Ու կարկաչէ՛ր սիրտըս վանքին լուսաբիրէն...

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԾ

#### ԵՐԲ ԿՎԱՂՕԹԵՍ

Քու հաւատքով հաւատալով կը մտնեմ  
Եկեղեցի քեզի հետ.  
Լուռ, երկիրա՛ծ, կը հետեւիմ քայլերուդ  
Խորանին մօտ լուսաւէտ:

Մունդը առկայ՞ կը ժպտի՞ն թէ կ'արտասուեն,  
Երբ խաչանալ՞ երեսիդ,  
Ծունկի կու գաս, բէկուած շուշան, Տիրամօր  
Քեզի բաղձանքը վճիտ:

Կը պլպլա՛ւ, կը պլպլա՛ւ Յոյսին պէս.  
Ծիրանածո՛ւլի, կ'երկարին  
Լոյս ծունկներ խորհուրդէն վեր մթնած,  
Երբ կ'աղօթես դուն լռին:

Մրմունջ վանկերդ՝ ոսկեմեղրու, թե կ'առնեն  
Բարձած կարօտ, տարփազին,  
Կը պանան սրտեղ սրտին աստղերուն,  
Երբ կ'աղօթես դուն լռին:

Կը թուի ինձ մանուկ մ'անմեղ, խնկահոտ,  
Կը մանկանամ հոգեւին,  
Քու հաւատքով, քու կարօտով, քեզի մօտ,  
Երբ կ'աղօթես դուն լռին...

